

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները:

Ստորագրողները գիտեն են ուղղակի
Դիմում: Редакция «Мелк»

Խմբագրությունը բաց է առաջին 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարությունները ընդունվում են ամեն լիցուով:

Հայտարարությունների համար գնորդում են
կարգադրությունները 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԱԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Քանի մի խօսք Պիտա-
տիգորսկի և նրա շրջակայ հանքային ջրերի մա-
սին: Նամակ: Մոսկովայից: Նամակ խաղաղից:
Նամակ խաղաղից: Նամակ խաղաղից: Ներքին
լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Полосы»
լրագրի թղթակցությունը: Արտաքին լուրեր:—
ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՍԻՆՆԵՐ:—ՏԱՅՏԱՐԱՆ-
ԲՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍԳ ՊԻՏԱՏԻԳՈՐՍԿԻ ՆԵՐՔԻՆ
ՇՐՋԱԿԱՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Կան զանազան հիանալի թվանշաններ՝ որոնք
չեն կարող լինել բաշխվել ապակեյի հա-
սարակի գեղեցիկ, այլ պահանջում են բժշ-
կության համար հանքային ջրեր: Այդ
պատճառով ամեն մարդ պարտավոր է ու-
նենալ մի փոքր հասկացողություն հան-
քային ջրերի վրա: Ես այս անգամ գիտա-
բարություն ունեմ գրել մի քանի խօսք մի-
այն Պիտապորսկի և նրա շրջակայ հան-
քային ջրերի մասին՝ թողնելով միւս ան-
գամին մանրամասնաբար խօսելու:

Պիտապորսկի ջրեր ծծմբային ջրերը (сѣр-
ниа воды) իրենց ֆիզիոլոգիական գոր-
ծողությունով գերազանցում են բոլոր եւ-
րոպայի ծծմբային ջրերը, քանիցս պատա-
հել է որ այսպիսի հիանալիքներ արտա-
սահմանի ջրերն օգուտ չը տեսնելով՝ ու-
ղարկված են Պիտապորսկի եւրոպայի
բժշկներին: Ես գիտեմ քանի օրինակ ինչպես
վիճակայի պրոֆեսոր Զիգմունդ սիֆիլիտա-
կան հիանալիքներն ուղարկել է Պիտա-
պորսկի:

Ծծմբային ջրերով բժշկում են գլխաւորա-
պէս սիֆիլիտական ցանքեր, նմանապէս
րեվմատիզմը, ջրային և կաշու հիանալի-
թիւնները և այլն:

Անցեալ ամառ իմ հիանալիքներն մէջ
կային այնպիսի անձինք՝ որոնք ամիսներով
և տարիներով բժշկված էին զանազան քա-
ղաքներ առանց օգտի, մինչդեռ երկու
երեք ամիս մնալով Պիտապորսկի բոլորովին
առողջ վերադարձան իրենց տեղերը: Չէ
կարելի ասել՝ որ ծծմբային ջրերը ունի
սպեցիֆիկական յատկություն անհետացնե-
լու սիֆիլիտական ցանք, այլ նա անշուշտ
ներգործում է իբրեւ ամենահզօր օքսիդան
ուրիշ գեղերի շարքում: Բեվմատիզմը,
ջրային և կաշու հիանալիքները եւ-
րեմն միայն բժշկվում են ծծմբային ջրերով
մանաւանդ եթէ այդ ցանքը դեռ նոր
սկսած են կամ գոնէ երկարատե չեն:

Պիտապորսկին 12 վերստ հեռաւորու-
թիւնով գէպի հիւսիս և արեւմուտ գտնա-
վում են երկաթեայ աղբիւրներ, խեղճու-
փոսկի գեղերն մէջ, որտեղ ըստ մեծի
մասին բժշկվում են թոյլ և սակաւարեւն
անձինքը, մանաւանդ արգանդի ցանքով
կանայք:

Աւազաններին հասցրած ջրի մէջ եւ-
րեմն քանակութիւնը շատ չնչին է, ու-
րեմն և ջրի ներգործութիւնը երկաթի, փոսկի և Նարզանի աղբիւրին մէջ լողանա-
բայց աղբիւրներին հասած ջրերը իր մէջ
պարունակում է բաւական երկաթ:

Իմ նկատմամբ խեղճութեան աղբիւ-
րները չունեն առանձին ներգործութիւն
հիւանդների վրա, ընդհանրապէս ջրային
ցանքերը երբեմն սաստկանում են, միայն սա-
կաւորին հիւանդները քիչ շատ կազդու-
րում են իրենց ոյժը:

Պիտապորսկին 15 վերստ դէպի արեւ-
մուտ գտնվում են Էսենտուկի գեղերն մէջ
հանքային ջրեր: Էսենտուկի ջրերը ունեն
այժմ 4 աղբիւր ըմպելու համար, հոշակ-
ված աղբիւրները 17 և 18 նումերներն են:

№ 17 ջրերը վաղուց հոշակված է որ-
պէս երեւելի դեղ ստամոքսի, աղիքների և
թոքի կատարին դէմ, պարարտ (եղուտ)
մարդիքը նմանապէս մեծաւ յաջողութեամբ
գործածում են այս նումերը:

Տկար և թոյլ անձինքը, որոնց արեւը
սակաւ է պէտք է ընդունեն 18 նումերը,
որին մէջ պարունակվում է բաւական շատ
երկաթ:

17 և 18 նումերների ջրերը ուղարկվում է
պետութեան բոլոր քաղաքները, բայց ով որ
ցանկութիւն ունի կատարիսլ օգուտ ստա-
նալ՝ անպատճառ թող ըմպէ ջրերը աղ-
բիւրէն...

Իմ կարծիքովս ամբողջ առաւել պետու-
թեան մէջ սակաւ կարելի է գտնել այնպիսի
առողջարար տեղ իր կիմպով և օդով
ինչպէս Վիսլոյից, որ քանի վերստ հե-
ռաւորութիւն ունի դէպի հարաւ Էսենտ-
ուկի գեղէն: Տեղի բարձր դրութիւնը
և լեռնային մաքուր օդը ունեն մեծ ներ-
գործութիւն առողջութեան վրա: Նարզանի
ասած աղբիւրը տալիս է այնպիսի մի գար-
մանայի համեմատ հանքային ջրեր, որ ներ-
գործում է ինչպէս կազդուրեցուցիչ և զօ-
րացնող ոյժը:

Տկար կուրծքով, հազացող և առհասա-
րակ թոյլանդամ մարդուց համար Վիսլո-
յիցի նման առողջարար տեղ ամառվան
ամիսները դժուար է գտնել բոլոր Ռու-
սաստանի մէջ:

Վերջինիս հանքային ջրերի մասին ես
կարող եմ առաջարկել իմ պատուելի հայ-
րենակիցներին յետագայ խորհուրդները: 1)
սիֆիլիտական հիւանդութիւն, բեվմատիզմ
և կաշու ցանք ունեցողները թող դիմեն
Պիտապորսկի մայիս կամ յետագայ ամառ-
վան ամիսները:

2) Ստամոքսի, աղիքների և թոքի կա-
տարը, և փորի մէջ զանազան ուղեղային
կամ հիմարոյ և կամ գործելու ունեցող-
ներն, նմանապէս պարարտ (եղուտ) մարդիքը
ուղղակի թող դիմեն Էսենտուկի գեղը
յուրիս ամիսին սկսած: Մայիսին մէջ Էս-
սենտուկի օդը խոնավ և վնասակար է:

3) Սակաւարեւն անձինքը, կանկի ուղե-
ղին հիւանդութիւն ունեցողները և ար-
գանդի ցանքով կանայքը պէտք է ծանա-
կապորսկին դէպի խեղճութեան յոշակ
միջին օգուտուս: Երբեմն արգանդի ցանքը
պատուել յաջող բժշկվում են Էսենտուկի
քան թէ խեղճութեան ջրերով: Սակա-
ւարեւն մարդիքը՝ որոնք օգուտ չեն ստա-
նում խեղճութեան յոշակ թող դիմեն Վիսլո-
յիցի և Նարզանի աղբիւրին մէջ լողանա-
բայց աղբիւրներին հասած ջրերը իր մէջ
չունեն բաւական երկաթ:

4) Թոյլանդամ, կուրծքով տկար, հա-
զացող մարդիքը մեծ յոշակ կարող են դի-
մել Վիսլոյիցի յոշակին մինչև սեպտեմ-
բեր և հոկտեմբեր:

Ինչ որ վերաբերվում է ջրային ցանքերուն
(вербная вода), նայելով հիւանդու-
թեան պատճառին, բժշկվում են զանազան
աղբիւրներով Պիտապորսկի, Էսենտուկի և
Վիսլոյիցի մէջ:

Իւրաքանչիւր հիւանդ պարտաւոր է նախ
և առաջ գիմել Պիտապորսկի և այնտեղ իր
ընտրած բժշկին՝ որ նա կարողանայ ման-
րամասնաբար հետազոտել հիւանդութիւնը
և նշանակել բժշկութեան տեղը:

Ուսուցչապետ խորհովի համալսարանի
բժշկապետ Ա. Շլիմանց

ՆԱԽԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Մարտի 29

Այսօր Մոսկովայի հայ հասարակութիւնը ժո-
ղովեց Նապոլեոնի աղբաւորների խորհուրդա-
նոր անցեալ տարվայ խորհրդի գործունէութեան
հաշիւը քննելու: Նախագահ Բ. Ս. Անանիանց
էր և հասարակութիւնը, որի մէջ կային և բաւա-
կանի ուսանողք, պատրաստվեց լսելու: Հաշիւը
կարդալուց յետոյ ընտրած յանձնաժողովը գրա-
մարդի գումարը վերադնեց և գտաւ կարգին: Չը
ներկայացնելով հաշիւի մանրամասնութիւնները,
ուղարկութիւն եմ դարձնում նրա հետեւեալ կէ-
տերի վրա:

1881 թուականի յունիս 1-ին աղբաւորնե-
րում կային հինգ չքաւոր անձինք, տարվայ
ընթացքում աղբաւորներից դուրս տուած են
նպատու ի միջի այլոց և հետեւեալ անձանց. օրի-
որդի, որը բացի ամսական թոշակէն մարդու
գնալիս ստացել է աղբաւորների գումարից 100
րուբլ բաժնի համար, իսկ աղբաւորների կա-
նոնադրութեան 13 §-ով ստուծ է. չաղբաւորների
կարգեալ լինին անձինք երկուց սեւեղ. Ա. ՆԷ-
քաւորք բարի վարուք, ծանրաբեռ-
նեալք ծէրութեամբ կամ ցարագա-
րութեամբ..... Բ. չքաւորք ամենեւին
որբացեալք և անտեղուկ: Իսկ 16-րդ §
բացատրում է երկրորդ կարգի չքաւորներին ան-
ուանելով նրանց չանչափահաս (16 §
անչափահասը արձակեալք լինին երբ ըստ օրոյ-
ման խորհրդարանի դէպ լիցի կարգել գնոտա-
յարում և իցէ ուսումնարանի կամ յանձնել հո-
գաբարձութեան որ և իցէ գերդաստանի): Բա-
ցատրութիւն կարծեմ հարկաւոր չէ:

Գետոյ վախճանված Ս. Սահարեկեանցի կի-
նը, ունենալով բաւականի հարուստ ազգական-
ներ (տապը) բաւականի ժամանակ է որ ստա-
նում է տարէնը 240 ր. և ապրում է աղբաւոր-
ներից դուրս, որովհետեւ, ստուծ են, իր անտա-
նելի ընտանիքիսամբ չէ կարողանում ապրել
աղբաւորներից, այլ կանանց հետ: Ես կարծեմ
այդ հինգ բաւականացուցիչ չէ, ես առաւել
երբ աղբաւորների չքաւորները ապրում են հա-
մարեա թէ ամեն մէկը առանձին, ինչպէս իրենց
տանը, որովհետեւ չունեն ոչ ընդհանուր սեղան,
ոչ ընհանուր քնարան, ոչ ընդհանուր սամովան,
այլ ստանում են ամանակաւ ինն րուբլ սեղանի
համար (այս տարի պիտի ստանան 10 ր.): Ուրեմն
ինչ քաւորութեան որ լինի չքաւորք, կարող է
այդ պայմաններին մէջ ապրել, իսպառ յարաբե-
րութիւն չունենալով իր հարկանքի հետ: Իսկ
թէ ուրիշներին է խանգարում, այն ժամանակը
կա 16 §, որ ստուծ է. չքաւորք արձակեալք
լինին յաղբաւորներից կամ ըստ յատուկ վարուց
կութեան խրեանց կամ վասն անպիտան վարուց
նոցա: Իսկ յիշեալ կինը աղբաւորներից մնա-
լով, աղբաւորների դրամարկը 90—100 րուբլու

չափ աւելորդ ծախս չի անի, որովհետեւ մի և
նոյն փայտը տարացնելով մէկ սենեակ տաքաց-
նում է և միւսը. նրան հարկաւոր չի լինի սե-
նեակի վարձ տալ, երբ աղբաւորներից 3—4
սենեակի գատարի ընկած են և այլն և այլն:
Աղբաւորներից մի կը ստանայ 120 ր., իսկ
մանր մոնը ծախսերը 20—30 րուբլից շատ չեն:
Կարող լինել, եւ այսպիսի փաստեր շատ կան:
Առհասարակ ինչպէս երևում է յիշեալ փա-
տերից և ինչպէս ստուծ են աղբաւորների գոր-
ծերը խաղաղները, այստեղ ամեն բան կատար-
վում է ընտանեկան կերպով, թէն չորդիքը
լրագիրների մէջ մեծ մեծ խօսքերով փառաւոր-
վում են ծարակի գրիչներով: Շատ և շատ ցան-
կալի է, որ պատուելի հասարակական գործիչները
ես առաւել նրանցից մէկը, որ իր պաշտօնով
աւելի պատասխանատու է քան թէ միւսները,
աշխատեն աւելի ուշադրութիւն դարձնել կանո-
նադրութեանը և հարկաւոր ձեւերի պահպանու-
թեանը հասարակական իրաւունքները չը շօշա-
փելու և նրա կարծիքը չը վրդովելու համար:

Վերջապէս Գ. Ս. Սահարեկեանցը պատմեց,
ինչպէս Գ. Ս. Անանիանցը, Գ. Ս. Լիստոպեան-
ցը և ինքը տարան արձակեալ պատի և դրին
հանգուցեալ Կայսրի դազակին: Պատկը ունէր
հետեւեալ վերնագիրը. «Մոսկովայի հայ հասարա-
կութեանց — Աղբաւորար թաղաւորը, Հայոց
եկեղեցու մեծ պաշտպանին»: Հայր Ստեփանեան-
ցին նկատեցին, որ աւելի լաւ կը լինէր գրել «Հա-
յոց ազգի պաշտպանին»: Եւ ճշմարիտ է որ ա-
մենեւին համաձայնութիւն չը կայ երկու մտքի
մէջ. հասարակութիւնը տալիս է պատկը եկե-
ղեցու անունով: Ես կարծեմ ժամանակ է հոտ-
կանալ, ես առաւել վերջին բանակոչից յետոյ
«Միայն» և «Մեղութիւն» մէջ, որ մենք ունենա-
լով ազատ քրիստոնէական եկեղեցի քրիստո-
նեայ տէրութեան մէջ, պէտք է արտայայտենք
յատկապէս ազգի զգացմունքներ, և երբեք չը
պէտք է որ և է դէպքերում մեր միայն կրօնա-
կան ձգտումները արտայայտենք: Չը մոռանանք,
որ երկար ժամանակ մեր եկեղեցին մինչև ան-
գամ Թիւրքիայում ոչ հալածել են և ոչ հալա-
ծում են, իսկ ազգը հալածվում է, քանդվում,
կորչում է Թիւրքիայում և հանգուցեալ Կայսրը
ճշմարիտ պաշտպան հանդիսացաւ մեր ազգին:
Վերնագիրը խմբագրված է եղել հայր Ստեփ-
անեանցի ձեռքով, որը դարձեալ մի ապացոյց է
որ մեր հոգեւորականները ընդունակ են հասկա-
նալ միմիայն եկեղեցու գաղափարը և երբեք
ընդունակ չեն լինի, ինչքան էլ իրանց գիտնա-
կան համարեն, հասկանալ ազգային գաղափարը:
Հանգուցեալ Կայսրը, որին Թիւրքիայի հայը
պարտական է Սան-Ստեփանոսի դաշնագրով, այդ
դաշնագրի մէջ պաշտպան չէր հանդիսանում մի-
միայն լուսաւորչական հայերի, այլ առ-
հասարակ հայերի:

Ե. Տ. Գ.

ՆԱԽԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Ապրիլի 10

Իշխանուհի Գոնդուկով-Կորսակովայի աշխա-
տութեանը և մի քանի հարուստների ստատա-
ձեւութեամբ յունվար ամսից սկսած բացված
է խորհրդովս ճաշարան է ծան ճաշերի, որտեղ
ամեն խեղճ մարդ կարող է կերակրվել 14 կոպե-
կով, ուսելով 2 տեսակ կերակուր, իսկ 20 կո-
պեկով 3 տեսակ կերակուր: Այժմ, ապրիլի 1-ից,
բացվեց ճաշարան է ծան ճաշերի՝ հրէաների հա-
մար, մի քանի հարուստ հրէաների առատաձե-
ւութեամբ: ճաշարանի բացման համար ժողովել
են չորս հազար րուբլ: Հիմնված ճաշարանի
նպատակն է քաղաքի խեղճ հրէայ քանդակներին,
նոյնպէս հրէայ-ղինուորներին, հրէայ բանտարկ-
վածներին ու հիւանդանոցներում եղած հրէայ-
հիւանդներին կարողութիւն տալ կերակրվել է ծան
կերակուր և մի և նոյն ժամանակ համեմատ իրանց

կրօնական պահանջման: Մարդս ակամայ մտածում է որ թիֆլիսն էլ վաղուց է որ հարկաւորութիւն ունի նոյնպէս մի էման ճաշարանի և այդտեղ էլ շատ հարուստներ կան, բայց պակսում է միզանում բիշ բան,—այն է հարուստների առատածեւոթութիւնը և կամքը դէպի բարեգործութիւնը:

Նորերումս խարկովի մի հարուստ հրէայ վաճառական, Բողէնցվայց ազգանունով, իրան սընակացած յայտնեց: Ասում են որ նա մեր յայտնի Միրզոբեկների գրասենեակին մեծ գումարներ է պարտ:

Այստեղ եղանակը արդէն զարնանային է, օրերը տաք են, ծառերը և արտերը սկսեցին կանաչել: Մթերքների գները հետեւեալն են. տաւարի մի ֆունտը արժէ 15 կօպ., գառան մի կէսը (полтышка) 1 ռուբ., ձուի 10 հատը 22 կօպ., հաւը 60 կօպ., սաքը 1 ռուբ. 20 կօպ., իւղի ֆունտը 50 կօպ., ալիւրի առաջին տեսակը 3 ռ. 60 կ. պուզը, երկրորդ տեսակը 2 ռ. 60 կ., երրորդ տեսակը 2 ռ. 20 կ.:

Կուսակ-խարկով-Աղովեան երկաթուղու վրա ջրից քանդված կամուրջը շինված է արդէն և երկաթուղու գնացքները մարտի 29-ից դարձեալ վերականգնվեցան և սկսեցին իրանց կանոնաւոր երթևեկութիւնը: Հանապարհորդները ու փոստը գնում են այժմ առանց տեղափոխութեան:

Այս օրերս հասաւ այստեղ թիֆլիսի հասարակութեանը լաւ յայտնի երգչուհի տիկին Պավլովա-կայա և դիտաւորութիւն ունի Զատկից յետոյ մասնակցել այստեղի կոնցերտներին:

Տեղիս համալսարանի մանկաբարձական հիւանդանոցի դիրեկտոր, պրոֆեսոր Լազարեւիչ ներկայացրեց հիւանդանոցի օրդինատորի պաշտօնի համար մի օրիորդի, այն է բժշկ-օրիորդ Իվանիցիւն: Համալսարանի խորհուրդը ընդունեց օրիորդին օրդինատորի պաշտօնի համար 38 ձայնով 4 ձայնի դէմ: Լավում է նոյնպէս որ բժշկատիկին Կաչվարովա-Բուդնիովա ստանալու է անատմիայի պրիվատ-դոցէնտի պաշտօնը տեղիս համալսարանում: Խարկովի բժշկական ընկերութեան վերջին նիստում պրոֆեսոր Գրուբբէ յայտնեց որ այստեղ կազմվում է մի ընկերութիւն որ դիտաւորութիւն ունի հիմնել այս քաղաքում ջրի-բժշկանոց (водолечебное заведение): Ընկերութիւնը, ինչպէս հաղորդում են, ունի արդէն մօտ 150 անդամ մասնակիցներ:

Ա.Թ. Մէլքումեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վաղարշապատ, 7 ապրիլի

Խոնարհաբար խնդրում եմ ձեր պատուական լրագրի մերձաւոր համարներին մէկում բարեհաճել տպել հետեւեալը:

Անցեալ 1879—1880 թուականների ընդհանուր թանկութեան ժամանակ, ինչպէս իր ժամանակին հրատարակեցին լրագրներում, վաղարշապատում պ. գաւառապետը ժողով կազմեց ժողովրդի աղքատ դասին օգնելու միջոցներ գտնելու համար: Այդ ժողովում վճռվեց հանդակութեամբ փող և ալիւր ժողովել չքաւորներին բաժանելու համար և նուէրներ ժողովելը յանձն առան պ. պ. Արշակ Տէր-Յովսէփեանց, բժ. Նիքոն Տէր-Գասպարեանց, Գովակիմ Շամբորեանց, Գէորգ Զանիրեկեանց և ֆիլիպոս Նաւասարդեանց: Այդ պարոնները հազիւ թէ ըսկսել էին իրանց գործունէութիւնը, երբ յանկարծ մի քանի խարդախ չարչիներ արմուկ բարձրացրին ժողովրդի մէջ և դադարեցրին հանդանակութիւնը: Այսու ամենայնիւ յիշեալ պարոններին յաջողել էր մի փոքրիկ գումար ժողովել, որ և մնաց, ինչպէս մեզ դրականապէս յայտնի է, պ. պ. Շամբորեանցի, Զանիրեկեանցի և Նաւասարդեանցի մօտ: Բայց թէ որքան էր իսկապէս այդ գումարը և ինչ գործարարութիւն ստացաւ, մենք ոչինչ տեղեկութիւն չունենք այդ մասին և պարոնները հասարակութեանը, գէթ ներհարստներին ոչինչ հաշիւ չը տուին:

Թէ և մենք ոչինչ կասկած չունենք պարոնների ազնւութեան վրա և չենք կարող հաւատ ընծայել մի քանիսի տարածած լուրերին, որ իբր թէ նրանցից մէկը ժողոված գումարի մի մասը սեփականացրել է և իր ընկերներին հաշիւ չէ տալիս, այսու ամենայնիւ հրաւիրում ենք պ. պ. Շամբորեանցին, Զանիրեկեանցին և Նաւասարդեանցին բարեհաճել հաշիւ տալ հրապարակաւ մեր նուիրած կուպէկներին գործարարութեան մասին:

Նուիրատուներից մէկը

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօսկվա, 10 մարտի

Մօսկվայի հայ հասարակութիւնից ընտրված (ինքնավարի 5) երեք անդամներս ուղարկում ենք ձեզ «յօգուտ սովկոնց» հետեւեալ գումարը, երկու հազար և հինգ հարիւր ռուբլի, որ հաւաքած է նոյն հասարակութեան և օտարազգի պարոնների նուիրատուութեամբ: Նուիրատուութեան ընդհանուր գումարը մինչև այսօր հասել է 4243 ռուբլի, որի վեց մասը պիտի գործ դրուի Տաճկաստանի հայ սովկոնց համար, երկու մասը կարօտեալ զպրոցների համար, իսկ մնացեալ երկու մասը մնում է հասարակութեան ձեռքում որպէս մայր գումար այլ և այլ բարեգործական նպատակով:

Առ այժմ ժողոված գումարից 2,500 ռուբլի յօգուտ սովկոնց փոխադրում ենք ձեզ, միջնորդութեամբ եղբ. Շովկանեանցների, որոյ փոխակազմիւր ունիք ստանալու այս իսկ յայտարարութեան հետ միասին:

Խոնարհաբար պատիւ ունեմք խնդրել արդոյ խմբագրութեանը անօրինել այդ գումարը և հասուցանել ուր հարկն է, այլ և բարեհաճել տպարկել նուիրատու պարոնների անունները մեր հաշիւի ճշմարտութեան և հաստատութեան համար:

Նուիրատուք Յ. Յովսէփեանց 1,000 ռ., Մ. Էմին 25 ռ., Գ. Լիւնովեանց 200 ռ., Ս. Թուժանեանց 150 ռ., Ա. Միսկինով 100 ռ., Տ. Էրզլըր 100 ռ., Եղբ. Ժամհարեանց 200 ռ., Ա. Քեթիկովեանց 25 ռ., Զ. Մանեանց 25 ռ., Գ. Սալամբեկով 25 ռ., Գ. Փիլոնիշեյն 5 ռ., Գ. Բարանսեանց 25 ռ., Լ. Խաչանեանց 100 ռ., Լ. Լազարեանց 7 ռ., Ե. Սահակեանց 10 ռ., Անյայտ ոմն 6 ռ., Զ. 50 ռ., Մ. Խալաֆեանց 10 ռ., Սիշկին 25 ռ., Ս. Բարսամեանց 50 ռ., Ս. Եղեանց 50 ռ., Ս. Զանուսեանց 200 ռ., Ս. Միրզաբեանց 50 ռ., Զ. Գուլարեանց 50 ռ., Կեղբ. Գանեանց 50 ռ., Հանդակարեանց 50 ռ., Գ. Աւետիսեանց 25 ռ., Եղբ. Գէորգեանց 50 ռ., Գ. Սարգսեանց 50 ռ., Ս. Գալարեանց 25 ռ., Անյայտ ոմն 25 ռ., Կարետնիկով 50 ռ., Տյուկին Սիւնի 100 ռ., Գ. Զաւափեանց 25 ռ., Եղբ. Մամբեանց 30 ռ., Գ. Վարդապետեանց 100 ռ., Ս. Ափանսեանց 50 ռ., Ա. Գէորգեանց 10 ռ., Մ. Սեյինի շախէ 15 ռ., Գ. Պատուականեանց 25 ռ., Ա. Ղանդարեանց 25 ռ., Գ. Խալաֆեանց 50 ռ., Ս. Մեկիւր-Սարգսեանց 10 ռ., Ա. Դուկասեանց 50 ռ., Մ. Բողդանեանց 40 ռ., Բ. Պապովեանց 15 ռ., Ա. Աւաքեկեանց 25 ռ., Գ. Անտոնեանց 10 ռ., Ա. Բարշէլի 15 ռ., ՕՊՇՆԵՅՏԵՆՈՎ 25 ռ., Մ. Լազարեանց 25 ռ., Մ. Ստեփանեանց 50 ռ., Գ. Տէր-Գալարեանց 15 ռ., Ա. Միրզաբեկեանց 25 ռ., Ս. Միրզաջանով 10 ռ., Ն. Ներսէսեանց 10 ռ., Գ. Ստաբ Միստ 50 ռ., Գ. Քանանեանց 25 ռ., Ն. Գեղանեանց 10 ռ., Ս. Շահադիդեանց 10 ռ., Մ. Փոսեանց 10 ռ., Հայ օրիորդ 5 ռ., Անյայտ ոմն 5 ռ., Հայ ոմն 10 ռ., Ա. Հեջուրեանց 25 ռ., Գ. Սուլթան-չահեանց 25 ռ., Մ. Սահարեկեանց 50 ռ., Շեբրյակով Շիպով 100 ռ., ՕՊՇՆԵՏԵՆՈՎ 50 ռ., Գ. Փիթոյեանց 50 ռ.: Ընդամենն 4,243 ռուբլ:

Մ. Փանեանց, Լ. Խաչանեանց, Մ. Շամբարեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են որ այդ քաղաքում շատերը անհաւերութեամբ սպասում են քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանեանի խմբագրութեամբ հրատարակվելու «Առողջապահական թերթի» լոյս տեսնելուն: Բժիշկը դեռ ևս չէ ըստացել կովկասեան կառավարութիւնից թոյլտուութիւն իր թերթը հրատարակելու և օրից օր սպասում է այդ թոյլտուութեան:

ԱՐԱՄԱՆԻՐԻՑ մեզ գրում են: «Տեղիս հայ հասարակութիւնը շատ զօռաբ է զանազանիչ բուն չէրքէզները, որովհետեւ նա բոլորովին հասկացողութիւն չունի իր ազգի գրութեան մասին,

անգամ չը գիտէ խօսել հայերէն և եթէ նրանցում հարկերից մինը գիտէ, վայ այն խօսելուն, որ նա է խօսում այդ տեսակ հայերէն չինարէնից ոչինչով չէ զանազանվում: Արմաւիրցիները որովորվին չէ կրթում իր դաւակներին և ուշք չէ դարձնում իր մարդն լեզուի վրա: Նրա մայրենի լեզուն չէրքէզերէն է, նա ապրում է չէրքէզների նախապետական սովորութիւններով, նրա ազգիկները ամենաթշուառ, ողբալի դուրս թեան մէջ են, իսկ կանայք ստրկի տեղ են բռնում: Եւ տեղիս քահանաները միայն իրանց չափերի ետեւից ընկած, հոգ չեն տանում ժողովրդի վրա, չեն մտածում զարթեցնել նրան այդ կորստաբեր քնից: Նրանց անկարգութիւններին սահման չը կայ և բոլորովին մոռացել են իրանց ու լինելը և իրանց պարտաւորութիւնը: Իսկ ուսումնարաններում հայ ուսուցիչները տեղեկութիւն անգամ չեն տալիս աշակերտների մայրենի լեզուի և կրօնի վրա: Չը գիտենք, մինչև երբ այս ամենը պիտի այսպէս շարունակվի և ո՞վ պիտի ազատէ թշուառ Արմաւիրը իր բարոյական քնից:»

«Русский Курьер» լրագրում կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը թիֆլիսից: «Այն օրից երբ ստացվեցաւ սարափելի լուրը Ս. Պետերբուրգից, թիֆլիսի բոլոր տաճարներում, թէ ուղղափառ, թէ հայ-լուսաւորչական, թէ կաթօլիկ ու բողոքական եկեղեցիներում, թէ մասնատական մկրիթներում ու հրէական միջնադպրոցում, ամեն օր մինչև 16 մարտի, կատարվում էին հոգեհանգիստներ ի Տէր հանգուցեալ թաղաւորի յիշատակին: Կարծում եմ որ ռուս ընթերցող հասարակութեանը հետաքրքրի կը լինի իմանալ ինչպէս վերաբերվեցին դէպի սարափելի անցքը հայոց հոգեհարակնութիւնը և տեղիս հայոց մամուլը: Հայոց եպիսկոպոս Աղափիրեան մայրեկեղեցում իր սասած քարոզի մէջ այն միտքը յատնեց, որ թաղաւոր-Նախատական, ինչպէս երեւում է սահմանված էր Նախախնամութիւնից ենթարկվել նոյն պիճակին, որին միշտ ենթարկվել են բոլոր մեծ վերանորոգիչները: Ինչպէս Գրիստոսը չարչարվեցաւ ճշմարտութեան համար, այնպէս էլ վիճակված էր մեռնել նահատակի մահով Նրան, ով իր ամբողջ կենսանքը նուիրած էր ճշմարտութեանը և իր ազգի մէջ աղաւտութեանը իրագործելուն: Հայոց մամուլը բոթաբեր լուրը ստանալուց միւս օրը նուիրեց իր առաջնորդող յօդուածները թաղաւորի յիշատակին: «Մշակ» լրագիրը այն միտքը յայտնեց որ հանգուցեալ թաղաւորի անուր յաւատեան անխնայ զեղի կապերով կապված կը լինի հայոց խնդրի հետ, որովհետեւ միմիայն հանգուցեալ թաղաւոր կայսրի դէպի հայոց ազգը ունեցած անձնական համարութեան չնորմով կայացաւ Սան-Ստեփանոսի դաշնագիրը, որով պահանջվում էին ինքնավարական իրաւունքները թիւրքաց հայերի համար: Հանգուցեալ թաղաւորին պարտական են հայերը իրանց թիւրքաբնակ եղբայրների շահերի պաշտպանութեամբ Բերկին կոնգրեսում: Եթէ մի ժամանակ կը վերածնվի հայոց ազգութիւնը, աւելացնում է լրագիրը, իր վերանորոգիչները նա պարտական են լինի միմիայն կայսր Ալեքսանդր II-ին: «Մշակ» լրագիրը յետոյ նոյն մտքերը արտայայտեցին «Մեղու Հայաստանի» լրագիրը և «Փորձ» ամսագիրը:»

Ապրիլի 14-ին երեքշաբթի օրը կայացաւ Արծրունու թատրոնում Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան տարեկան ժողովի նիստը:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են, որ մարտի 29-ին, հայոց եկեղեցում մէջ ժամատացութիւնը վերջանալուց յետոյ հայր Աւարկեանց բերանացի բացատրեց որ ստացել է Շամսուլու վիճակային կոնսիստորիայից Կ. Պոլսի «Սովկոնց ինստատու Մասնաժողովի» հրահանգները՝ հրաւիրելու համար ժողովրդի ուղարկութիւնը դրամական օժանդակութիւններով նպաստելու Հայաստանի սովորութիւնների դուրսեցնելը: Հրահանգների մէջ առաջարկվում էր ընթերցել 4 անգամներ, որոնցից 2 հոգեհարակն և 2 աշխարհական: Նոյն ժամանակ ժողովուրդը ընտրեց Ա. Բահաթրեանցին և Ա. Բուզանեանցին, որոնք Ղուրայի նշանաւոր հարուստներն են և որոնց կը յանձնվի հրահանգների և ստանալների կէս մասը:

Թէմիր-Խան-Շուրայից մեզ գրում են: «Անցեալ

տարի գրեթէ ամեն տեղ Անդրկովկասում թանգութիւն էր, իսկ մի քանի տեղ սով մինչև անգամ, այն ինչ մեղանում ալիւրի պուզը նոյն ժամանակ 2 ռուբլուց հազիւ բարձրացաւ և թըխած հացի տակսա 4 կօպէկ էր ֆունտը: Բայց չը նայելով այդ տեսակ աջող հանգամանքներին, որոնք պահպանվեցան ամբողջ տարին, այժմ մեղանում մի քանի բաղդախները անձանց չնորմով ալիւրի պուզը ծախվում է 80 մինչև 90 կօպէկ, իսկ հացի առաջին տեսակի ֆունտը 5 կօպէկ, երկրորդ տեսակի 4 կօպէկ:»

ՇՈՒՇՈՒՑ պ. Տիգրան Նազարեանց խնդրում է մեզ յայտնել, որ այդտեղ լայս տեսակ նրա հրատարակութիւններից առաջինը «Քնար Սոսնակ» վերնագրով: Գրքի գինն է 50 կօպէկ: Գիմել կարելի է այս հասցեով: Шуша, Тиграну Назаряну:

Եթէ գաւառներից կամ նրան ունենալ «Մշակ» առանձին հին թէ նոր համարներ, պէտք է իւրաքանչիւր համարի համար ուղարկել 7 կօպէկանոց մարկա:

ՀԻՆ-ՆԱԽԻՑԵՆԱՆԻՑ մեզ գրում են որ այդ տեղի քաղաքային զարդիլուսուցիչներից մինը դաս տալու գնալիս միշտ խմած է լինում և դասի ժամանակ աշակերտներին միշտ չփոխում է:

Ստացանք 34 ռուբլ յօդուտ Հայաստանի վան նահանգի հայ սովատանջներին: Այդ գումարը հաւաքեցին ապրիլի 13-ին, երկուշաբթի օրը թիֆլիսի Խովկանքի գերեզմանոցում պ. պ. Սմբատ Հովսէփեանց, Կոստանտին Աղաթեանց և Մկրտիչ Տէր-Սիմեոնեանց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՆԸ

Թաւրիզից „Голосъ“ լրագրին գրում են հետեւեալը: Պարսկաստանի դուրսիւնը չափազանց տխուր է: Պատմական Արաբիքներ ի այդ գեղեցիկ երկիրը, որ նկարագրված է «Շահնամ» երեկելի գրքի մէջ, մի ժամանակ ծաղկած դուրսեան մէջ եղող այդ պետութիւնը օրից օր քաղաքվում է: Մինչև անգամ հարկանցի տկանատեսը չի կասկածի, որ Պարսկաստանը մօտենում է իր անկմանը, որ վաղ թէ ուշ նա այլ ևս չէ կարող մի ինքնուրոյն քաղաքական մարմին լինել, որովհետեւ ասիական այդ ամենահին պետութեան ներքին թուլութիւնը վերին աստիճանի է հասել: Գայտի Փրանսիացի Շարքեն իր ճանապարհորդութեան ժամանակ Պարսկաստանը ծաղկած դուրսեան մէջ էր գտել: Այդ ժամանակից ընդամենը 200 տարի է անցել և երկիրը այդ կարճ ժամանակամիջոցի մէջ չափազանց աղքատացել է: Տնտեսական բարեկաւութեան բացակայութիւնը, նահանգների կապով տալը այնպիսի կատարելներին, որոնք մեծ կաշառք են տալիս շահին և նրա միջնորդներին, մահմետական հոգեհարակնութեան և պաշտօնականների կատարեալ անկումը այն գլխաւոր պատճառներ են, որոնց շնորհիւ հին ժամանակներից իր արդիւնաբերութեամբ յայտնի երկիրը այժմ մինչ այն աստիճան խեղճացել է, որ նրա բնակիչները առաւօտից մինչև երեկոյ աշխատում են օրական 10 կամ 15 կօպէկ վարձով: Կարելի է հաստատաւ ասել, որ Պարսկաստանի բնակիչները կէսը այդ դուրսեան մէջ է: Երկրի մէջ բոլորովին զրամ չը կայ և եթէ ռուսաց թղթադրամը և արծաթ փողը չը լինէր, մենք ակնառօտ կը լինէինք սկզբնական կուլտուրային, որի ժամանակ մարդիկ միմեանց հետ փոխում էին իրանց արդիւնաբերութիւնները:

Մի քանի պետութիւններ ՚ի նկատի ունենալով Պարսկաստանի քայքայումն և քաղաքական ապագայ փոփոխութիւնները, աշ-

խառնում են իրանց համար տեղ պատրաստել և հեռացնել իրանց հետ միջոցներին: Անդրկական կառավարութիւնը ամեն կերպ կամենում է առաջնակարգ դեր խաղալ Պարսկաստանի մէջ և ձեռք բերել պարսկական համակրութիւնը: Նա կանոնաւոր կերպով իրագործում է իր յարձակման նախապիւծը, հետզհետեւ ընդարձակում իր առեւտրական գործերը Պարսկաստանի հետ և պաշտօնապէս հովանաւորում է քրիստոնէութիւնը տարածող միսիոնարներին, որոնք բնակւում են Սպահանի, Համադանի, Թաւրիզի և Ուրմիայի մէջ: Անցիալ տարվայ սովի ժամանակ անգլիացիների ժողովրդականութիւնը աւելի էլ մեծացաւ. ամբողջ ձմեռվայ ընթացքում հազարաւոր մարդիկ ամեն օր հաց էին ստանում Անգլիայից ուղարկված փողով: Եւ չեմ պնդում, որ այդ մարդասիրական գործը կատարելով, Անգլիան կամենում էր գրաւել պարսկների համակրութիւնը, այլ կամենում էր միայն ձանապարհորդների աչքը ընկնող այն փաստը, որ Անգլիայի ազդեցութիւնը Պարսկաստանի մէջ ամեն կերպ գերակշռում է: Ամբողջ Պարսկաստանի մէջ ծախվում են անգլիական գործարանական արդիւնաբերութիւններ: Իւրաքանչիւր տարի անգլիական դեսպանները և հիւպատոսները մի հաշիւ կամ տեսութիւն են ներկայացնում իրանց կառավարութեանը Պարսկաստանի առեւտրի մասին և այդ հանգամանքը միջոց է տալիս անգլիական առեւտրին աւելի ընդարձակվել Պարսկաստանի մէջ և մեծ օգուտներ ունենալ:

Քանի որ անգլիացիները այդպէս ճշգրտում են զլիսաւոր դեր խաղալ Պարսկաստանի մէջ, ուստի ել պետք է անհոգ չը մնան, մանաւանդ որ երբեմն այնպիսի միջոցներ են գործ դրվում, որոնց նպատակն է ոչ թէ միայն վնասել Ռուսաստանի ազդեցութեանը Պարսկաստանի վրա, այլ և թշնամութիւն սերմանել այդ երկու պետութիւնների մէջ: Բացի այդ Ռուսաստանի քաղաքական և առեւտրական շահերը պահանջում են, որ նա կանոնաւորէ իր յարաբերութիւնները Պարսկաստանի հետ և ամրացնէ իր ազդեցութիւնը հարեան երկրի մէջ: Իբրեւ զրացի երկիր Պարսկաստանը կտրոզէ և ընդարձակ ասպարէզ դառնալ ուստի առեւտրի համար, միջոցներ այժմ առեւտրը սահմանափակվում է Պարսկաստանից գորգեր և չոր մրգեր բերելով:

Մի կողմից այդ նպատակին հասնելու և միւս կողմից Ռուսաստանի կողմը Պարսկաստանի վերաբերութեամբ մեծացնելու համար ցանկալի կը լինէր, որ ուստաց շահերը պաշտպանող հիմնարկութիւնների կառավարիչներ նշանակվին քաղաքականապէս զարգացած և Պարսկաստանի հետ ծանօթ անձինք: Եթէ այդ պայմանը կատարվի, գործերը այլ կերպարանք կրատանային, Ռուսաստանի ազդեցութիւնը կը մեծանար և ուստական արդիւնաբերութիւնները կը լցնէին Պարսկաստանի քաղաքները:

Տարաբաղադար Թաւրիզի նախկին հիւպատոսի նման աստիճանաւորներ, որ արեւելիկացաւ ծառայութեանից զանազան զեղծութիւններ պատճառով, չէին կարող նպաստել այդ ցանկութեան իրագործմանը: Ներքին յարաբերութիւններով թէ պարսկները և թէ ուստ հիւպատոսների հետ նպատակում էին ուստաց հեղինակութեան ոչնչանալուն, որ չափազանց մեծ էր Դուբովնի, Անիշիւի և Գիրսի նման դեսպանների ժամանակ: Առիթ կայ ներքինը:

Իր, որ այժմեան դեսպանի ժամանակ Ռուսաստանի հեղինակութիւնը իր նախկին դրութեանը կը հասնի Բացի այն որ պ. Ջինովիվ խելօք և եռանդոտ մարդ է, նա լաւ ծանօթ է Պարսկաստանի հետ, որովհետեւ ուստաց դեսպանի պաշտօնը ստանալուց առաջ նա 15 տարի հիւպատոսի քարտուղարի պաշտօն է վարել և այդ պատճառով նրա ընտրութիւնը չափազանց աջող է, եթէ ի նկատի առնենք գործերի այժմեան դրութիւնը:

Քիւրդերի ապստամբութիւնը դեռ ևս այստեղ օրվայ խնդիր է: Պարսկական զօրքերը Սադրազամի և աւստրիական օֆիցերների առաջնորդութեամբ սուրինքով և շինքով բնակեցրած պարսկական զինվորները աւերելուց յետոյ ուղարկվեցան իրանց անեւրը Սադրազամը վերադարձաւ Քիւրդներ և այնտեղից արտաքսվեցաւ իր հայրենի կողմ: Քիւրդները, որովհետեւ շահը գրկեց նրան առաջին միսիոնարի պաշտօնից: Այդ պահի միջոցով արտաքսական դարձեալ անպաշտ պահ մնաց քիւրդների ասպատակութեան: Ամեն օր այստեղ անհանգստացնող լուրեր են ստացվում, որ շէյխ Իբրահիմը հրապարակում է քիւրդներին զինաւորվել և որ քիւրդական հրոսակները «ГОЛОСЪ»-ի ընթերցողներին յայտնի Համգաւադայի առաջնորդութեամբ են հրաւիրում: Քիւրդիստանի մօտ բնակութիւն ունեցող բազմաթիւ ընտանիքներ, քիւրդական շոր արշաւանքից վախենալով, գաղթում են Թաւրիզ և մինչև անգամ Ռուսաստան:

Ինչպէս երևում է այդ լուրերը անհանգստացնում են պարսկական կառավարութեանը: Շահը Քիւրդներ հրաւիրեց թագաժառանգին, որի բնակութիւնը պարսկական օրէնքների համեմատ պէտք է Թաւրիզի մէջ լինի և որը Ատրպատականի կառավարիչ է համարվում: Պէտք է նկատել, որ թագաժառանգի հեռացնելը Թաւրիզից ուրիշութիւն պատճառեց բնակիչներին, որովհետեւ նրանք յոյս ունեն ազատվել այն զրկանքներից, որոնց ենթարկվում էին նրա շնորհիւ: Շահը Ատրպատականի կառավարիչ նշանակել է Ալա—Գօլին, որ յայտնի է Պարսկաստանի մէջ իր եռանդով և խիստութեամբ: Նա արդէն ուղեւորվել է Քիւրդների և օրերում Թաւրիզ կը հասնի: Ինչպէս երևում է նրան յանձնված է վերջնականապէս ճնշել քիւրդական ապստամբութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Ընթերցողները» հաղորդում են Կ. Պոլսից, մարտի 8-ին որ սուլթանը հրապարակեց Գօլէնին իր պալատը և խնդրեց նրան տալ մի քանի բացառութիւններ մեծ պետութիւնների ներկայ դրութեան մասին:

— Բ. Կուլը ուղարկեց մի յատուկ նուիրակ Շէյխ Իբրահիմին մօտ: Շէյխը մերժեց ներկայանալ Կ. Պոլսի, և կանչեց քիւրդերի գլխաւորներին, յայտնելով նրանց որ պատրաստ լինեն գաղտնի սկսվելուն պէս նորից արշաւադարձ: Պարսկաստանի դէմ: Քիւրդներն աջնաւորում է համագլխ շէյխին չը կատարել իր դիտաւորութիւնը:

— Մեզ հաղորդում են, որ Քիւրդաց կառավարութիւնը բռնի կերպով հաւաքում է արդէն վասպուրականի հայերից նրանց մօտ ունեցած գէնքերը: Առում են վ. ան քաղաքում հաւաքված են հայերից մօտ 800 հրացաններ: Հաւատացնում են որ վ. անի հայ ազգանքը նպատակում են Քիւրդաց կառավարութեանը, մասնակցել նրան այն հայ բնակիչներին, որոնց մօտ գէնքեր են գտնվում:

— Քիւրդների եւրօպական լրագրողներին գրված նամակներում ասում են որ քիւրդերը 1,000 հոգու թուով, գրաւեցին Մարգաւառը և որ Շէյխ

Իբրահիմը դիտաւորութիւն ունի յարձակվել Ուրմիայի վրա, իսկ Արդէն—Կաղէր պատրաստվում է արշաւել Թաւրիզի վրա: Ուրմիայում բնակիչները շատ անհանգստ են և շատերը դադարում են դէպի ուստաց սահմանները:

— «Deutsche Zeitg» լրագիրը լսել է որ ներկայ թիւն Աւստրիայի կայսրը կը թագադրվի Չէխիայի թագաւոր և այնուհետեւ նրա որդին, Բուղօֆ թագաժառանգը կը յայտնվի Չէխիայի թագաւոր:

— «Порядокъ» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Փոքր—Ասիայի նահանգապետները հրաման են ստացել Քիւրդաց կենտրոնական կառավարութեանց ուղարկել Կ. Պոլսի Փոքր—Ասիայի նահանգներում եղած բոլոր աւերույ գէնքեր, թողնալով միայն կառավարական պաշարները: Տրագիզմի մէջ այդ նիւթերը արդէն բաժնվում են նաւերի վրա: Կարծում են որ այդ հրամանը կապ ունի Գոննաստիդի դէմ պատրաստվող պատերազմի հետ: Բայց Բ. Կրան այդ կարգադրութիւնը մեծ ապուշութիւն գործեց Փոքր—Ասիայի թէ մանկականներին և թէ քրիստոնէականներին: Ոմանք կարծում են որ դա ապացոյց է որ Քիւրդերն դիտաւորութիւն ունի յանձնել իր ասիական նահանգները մի օր և է մեծ պետութեան հովանաւորութեանը: Եւ իրարմը աւերույ գէնքերը է որ ի հարկէ այդ տեսակ ենթադրութիւնը անհիմն է, բայց նա ջոյց է տալիս թէ ինչ է Քիւրդիստանի ասիական երկրներին բնակիչների տրամադրութիւնը և վկայում է Քիւրդաց տիրապետութեան յարաւերութեան վերաբերութեամբ անվստահութեան մասին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ—Խորկում կայ հիմնված մի կլուբ հակառակորդի համար, որտեղ անդամ ընդունվում է միայն նա, ով 6 ֆուտ և երկու գլխով հասակ ունի: Այս օրերս այդ կլուբում մի հացիկոյթ տրվեցաւ. հատկանալի բան է որ այդ տեսակ հիւրերին կերակրելու համար առաջին քանակութիւն մթերքներ հարկաւորվեցաւ:

Մօտ ժամանակներս Հռոմում հետեւեալ մի տարաբնույթի չարագործութիւն յայտնվեցաւ:—Արդէն բաւական ժամանակ է որ Պէլեգրինօ փողովքի բնակիչ կանայք զանազան առասպելներ էին պատմում միմեանց այդ փողովքի վրա գտնվող մի տան մասին: Նրանց կարծիքով այդ տան մէջ բնակվում են չորս ոգիներ և իւր թէ իրանք Լուսնի են նրանց ազդեցակները և շղթայի ձայները: Այդ լուրերը հասան և տեղական վարչութեան, որը և նշանակեց մի յանձնաժողով հետախուզութիւն անելու այդ կախածաւոր տան մէջ: Մի օր վաղ առաւօտեան յանձնաժողովը եկաւ այդ տունը հետախուզելու:—առաջին յարկում բնակվողները յայտնվեցան մի մարդ ու կին. ամեն ծակուճուկ նայեցին և ոչինչ բան չը գտան կատարած: Երկրորդ յարկում մի ծածուկ մուտքի դռն և երբ տան տիկնոջից բանալիքը պահանջեցին, նա աշխատում էր դուռը պահելու տեսակից: Բանալին տաւան, դուռը բացարկւ և տեսան մի սանդուղտ որ տանում էր դէպի ներքնատուն, որ սաստիկ մութն էր. այդ ներքնատան մէջ գտնվեցաւ մի կատարեկապէս կըմախք դարձած հասակաւոր կին: Յայտնվեցաւ որ այդ կինը բնակարանի տիրոջ քայրէ կը, որին և թէ տալի է արդէն այդ ներքնատան մէջ, բուրդով մեքի, շղթայակապ պահում էին, տաւով ողորմելի կնոջը ամեն օր մի կտոր հաց ու մի աման ջուր: Կրան ընտանեկան էին, որ կարողանան նրա ունեցած կաշքը փախտակել: Բանտարկված կնոջը ուղարկեցին հիւանդանոց, իսկ նրա եղբորը իր կնոջ հետ յանձնեցին դատարանին. և այդպիսով այդ փողովքի բուրդը չոր ոգիները անհետացան:

Փարիզի գիտութեան ակադեմիայի նիստի մէջ պ. Բուլէն յայտնեց որ իր կարծիքով եթէ ընտանեկան տիրիւններով ոչ ոք չէ հիւանդանում, չը յայտնվի որ Ամերիկայից մեծ քանակութեան խողի միս է բերվում, պարունակելով իր մէջ տրիխիններ, պատճառը նրանում է տեսնում, որ Ֆրանսիայում սովորութիւն կայ միսը միշտ լաւ խորովելու կամ եփելու, իսկ յայտնի է որ տրիխինները մեծ ապուշութեան չեն դիմանում, ոչնչանում են և այդպիսով դառնում են անվնաս: Խողի միսը այն ժամանակ է վտանգաւոր:

Լոր, երբ կիսահում է ուտվում, կամ հում, ծըխած վիճակի մեծ:

Սալոնիկում աւազակները բռնել են մէկ անգլիացուն,—պ. Սոտերին իր կնոջ հետ, բայց այդ վերջինին չուտով արձակեցին, երբ այն դիտաւորութեամբ որ կնոջ միջնորդէ մարդուն յետգնելու համար: Աւազակները կալանաւորածին յետ տալու համար պահանջում են 15,000 ֆունտ ստերլինգ: Անգլիական դեսպան Գօլենը Բարձր Կրանը տեղեկագիր է տուել այդ առիթով:

«La Nature» լրագրին գրում են որ փարիզում ցոյց են տալիս այժմ մի նոր տարեկան երեխայ, որը աւելի փոքր է քան թէ նոր ծնված մանուկը: Անտրոպոլոգ Բէլիտիւրը իր նկարագրութեան մէջ ասում է որ այդ երեխան շատ առողջ կազմուածք ունի, բաւական լաւ զարգացած է համեմատ իր հասակին և ծննդեան օրից մինչև այժմ միայն երկու մատի չափ է մեծացել և կշռում է մօտ 6 ֆունտ:

Մօտ օրերս Բօրգօ քաղաքում մի սխալմունքի պատճառով մի մեծ դժբաղդութիւն պատահեց: Նրեք երեխայ թունաւորվեցան ընդունելով փոխանակ կալումելի ստրիկինին. երկուսը մի երկու տարեկան տղայ և մի նոր տարեկան աղջիկ, անմիջապէս մեռան, իսկ վեց տարեկան աղջիկը փրկվեցաւ, իսկայն ընդունելով դեղմափ: Դատարանի ներկայացուցչի ներկայութեամբ բլոփիլը գնեցով դիակները ստուգեց նրանց թունաւորված լինելը: Կեղագործը յուսահատութեան մէջ է, նա ինքն խոտաւորվում է որ դեղերի չիշերը անգործութեանից խառնել էր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 ապրիլի: «Исправит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է ընտրված իշխան Գրչակովի անունով այն առիթով, որ 25 տարի լրացաւ այն ժամանակից, երբ նրան յանձնվեցաւ արտաքին գործերի միսիոնարութեան կառավարութիւնը: Ընտրվածի մէջ ցոյց են տուած կանցլերի ծառայութիւնները այդ պաշտօնը վարելու ժամանակ: Իշխանին շնորհվում է կրճի վրա կրելու համար ի 85ր Հանգուցեալ Կայսրի և Կայսր Ալեքսանդր երրորդի պատիւները այժմանքով զարդարված: Վաղեա և Օլա գետերի սառույցները բացվել են: «Новости» լրագրը հաղորդում է, որ մահուան պատժի ենթարկված յանցաւոր Վերալէշի հայրը քահանայ Մօսկվայի մէջ խեղդել է իրան:

ԲԵՐՆ, 14 ապրիլի: Միացեալ խորհուրդը յանձնեց պրօկուրօրին քննութիւն կատարել Փինեմայի մէջ կազմած ազգարարութիւնների մասին, որոնք բողոքում են Ս. Պետերբուրգի մէջ թագաւորապալանների մահուան պատժի ենթարկելու դէմ:

ԲՕՆ, 14 ապրիլի: Գեներալ Լօժերօի գորաբաժնի մօտ Տունիսի կալուածները, մօտեցաւ Կեֆին և պաշարում է այդ քահալը: Ֆրանսիական մի նաւ. ուժեղացնում է Տաբար նաւահանգիստը Զօրքերի նաւից ցամաք անցնելը այսօր կատարվեցաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 ապրիլի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 97 ռ. 25 կ., երկրորդ 94 ռ. 25 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 223 ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ռ. 75 կ., երկրորդ 92 ռ. 87 կ., երրորդ 92 ռ. 87 կ., օսկի 7 ռ. 97 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօդօնի վրա արժէ 23,62 պէս, Ամստերդամի վրա 124,62 պէս, ուստաց 100ր. Համբուրգի վրա արժէ 210 մարկ 50 պֆ., փարիզի վրա արժէ 260 ֆրանկ: Բօրսայի արամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԲՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մինչև այժմ չեղած **ԱԿՆԵՅԻ ԻՒՂ ԲՃԻՇԿ**
ՀՄԻՂՏԻ, որ կատարելագործված է բժիշկ **ՄԱՎՐԻ**
ԿԻՒ ԴԵՅՉԻՑ: Առողջացնում է ամեն տեսակ թոկ-
ԼՈՒԹԻՒՆ, եթե նա բնական չէ: ԵՐԵՎԱՆԻ ՐԱ-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՇ, այդ իսկից,
մանրամասն թԻՆՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Այդ
իսկը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և ԱԷՔԱՄԱՐ ՎԵՆՅԵՆԱՅ, Կազանից
փողոց № 3: 44—52

Վերականգնեցող **ՄԱԿ-ՄԱՍ**
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձ-
նող: Կինը 2 ր. շերտ, փոսս-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.:
ԱՆԳԱԼԱԿԱՆ խառնութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԻՒՆԱՅԻ**
ԻՒՂ, մազերը ամրացնելու հա-
մար, 1 ր. ամենը փրձին զկա-
յան զէմ, **ՏՈՒՍԱԼԵՏԻ ՍԱ-**
ՊՈՆ և հոտուէտ ջրեր և այլն:
51—100

Չը նոյնիւր մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին.
ԿՈՆԳՈՒԹԵՑ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և
1 ր. 40 կ., հիւսնայի **ԿԱՅՍԱՆԻ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ**
ԹԵՑ 2 ր. առանց թղթի: Անգլիական բէլովկներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20
ր.—200 ր. Անգլիական խառնութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻ ԹԱՄԲԵ-**
ՐԸ, ճանաչի **ԿՈՂՊԵՔՆԵՐԸ**, Տուրքի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկտորակա կակա-
շօխալի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկի մեզալ ստացան:
ՀՈՏԱԼԵՑ ԹԵՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65
կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել: Անգլիական խառնութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կօֆիկաներ
հազար զէմ 60 կ. ֆունտը: 59—100

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. 9.
Գրիգորեանցի «Կովկասեան» գրաւաճառանոցներում: Մտաւոր, ֆիզիկական
և բարոյական խնդիրներով բնական մասին: Հեղ. Ջոն Սախարա Բէլէկի. Թարգմ.
Գրիգոր Շահրուզադեանի. գինն է 60 կոպէկ: Օտարաբաղաւոր կարող են
ուղղակի թարգմանելն զիմեյ այս հասցէով: ВЪ ТИФЛИСѢ, Учителью Ар-
мянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцъ.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանել հետեւեալ աշխա-
տութիւնը: Մայրական Դատարարական թիւեր, բնութեան օրինաց վերայ հիմն-
ուած. Հեղ. Ժ. Բամբուստի:

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊ-
ՐԻԼԻ ՎԵՐՉԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ
ԳՐԲԵՐԸ:

- 1) Երկու մանրակէպ. Ա. Գոնս Գորէից
Թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
- 2) Պոզնանու ուսուցչի օրագրից, Թարգմ.
Տ. Նազարեան: 20 կ.
- 3) Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաս-
տեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
- 4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում,
Արցախեցի: 30 կ.
- 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, Թարգմ.
Տ. Նազարեանցի: 15 կ.
- 6) Քնար խօսնակ, բանաստեղծութիւն-
ներ Ն. Տ. Աւետիքեան: 50 կ.

Այս վեց զբքի գինն է միասին 1-50
կոպէկ: Առանձին մէկի համար բաժանոր-
դագրութիւն չէ ընդունվում, բացի «Քնար
խօսնակից» որի համար առանձին կարելի է
ստորագրել և փնայեալ հինգը առանձին:
Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան:

ԻՎԱՆ ՆԻԿԻՏԵՎ ԱՍՏՈՒԱՅՏՈՒՐՈՎ
նոյն երեւելոցով և ՍՏԵՓԱՆ ԵԳՕՐԸ-
ՎԻՉ. ԲՍՐԻՍՈՎ, ցաւօք սրտի յայանե-
լով առաջինի մօր և երկրորդի քրոջ
ՆԱՏԱԼԻԱ ԵԳՕՐՈՎՆԱՅԻ մահուան մա-
սին, խնդրում են ծանօթներին և բա-
րեկամներին ներկայ գտնվել հանգու-
ցեալի յուղարկաւորութեան հանդիսին
ՇԱՐԱՅՍ ապրիլի 18-ին առաւօտեան
10 ժամին: Հանգուցեալին կը տանեն
ՄՈՂՆՈՒ եկեղեցին իր սեփական №
8 տանից Սօլալուում: ՆԱԳՕՐԵԱՅԱ
փողոցի վրա: 2—3

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է
«Կենտրոնական» ու «Կովկասեան» գրա-
ւաճառանոցներում: ՄՕԼԻԵՐԻ «ՏՂԱ-
ՄԱՐԴԱՆՑ ԻՐԱՏ», ՀԵՂԻՆԱ-
ԿԻ ԿԵՆՏԱԳՐՈՒԹԵԱՄԲ: Գինն
է 30 կ.:
ՎԱՐՇԱՒՍԿԻ ՊԵԿԱՐՆԱ ՍՕԼՈՂԱԿՈՒՄ
տուն կնի ի ա զ Ս Մ Բ ա տ օ Վ ի:
Պատրաստվում են մեծ քանակութեամբ
պ ա ռ ք ա յ և կ ու լ ի չ և կը վաճառվեն
Փոնտը 20 կ., 30 կ., 40 կ., 50 կ. և
60 կոպ.: 3—3

Въ Редаціи газеты
«МШАКЪ»
Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.»
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրաւաճառանո-
ցում:
1. Հայր և Հայաստանը օտարների աչքում: Հրապարակական դասախոսութիւն ըն-
թերցուած Թիֆլիսի Ժողովարանում Արքար Յովհաննէսեանի. Թիֆլիս, 1881 թ. 7.
30 կոպ.
2. Նոյն տեղը վաճառվում են:
Միւլթիւն Հայութեան, Բանաստեղծիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օր-
մանեան, արտասանեալ ի յարանին կրթարարաց ընկերութեան Յիւսկիւտար ի 17-ին
նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլսի 4. 45 կ.:
3. Տեղեկագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայս Հ. Ներսէսի Սարգսեան Մի-
թարեան վարդապետի, Վենետիկի 4 ր.
4. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց Հ. Ղուկ. վարդ Ինձինեան ի Մի-
թարեան Միւր. ըստ հին և ըստ միջին դարոյ անուանեալ ժամանակաց ի Վենե-
տիկի 5 ր.
5. Պատմութիւն Արիստակիայ վարդապետի Լատիկիւրցիոյ, Վենետիկի 4 ր. 50 կ.
6. Մեծին Գրիգորի Առաջնոյ Սրբոյ Քահանայապետի կանօն Հոգեւական,
Վենետիկի 4 ր. 50 կ.
7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ծառք և աղօթք,
Վենետիկի 4 ր. 2 ր.
8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ Վենետիկ
4 ր. 2 ր.
9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեալութիւն յամի 1876
Աւրաղայ Մ. Արթուրեան Ֆօքշան 4 ր. 20 կ.
10. Սոյ. Կեանքի Գրքութեան ի Մահ Աւելի, Թարգմանեալ Տեառն Հ.
Մանուկի Վ. Զախմանեան ի Միթարեան միաբանութիւնէ, Վենետիկի 4 ր.
75 կ.
11. Առաջ Միթարայ Գոշի, Վենետիկի 4 ր.:
Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկ տօներին նուիրելու գանա-
զան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ զրբեր, Ֆրեկեան խա-
ղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն:
Օտարաբաղաւորքը ճանապարհի ծախք են վճարում 10% առանց փողի պա-
տուէրները չեն կատարվում:

Ա Ն Գ Ա Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ			
Հաւաքումնք թէլի ֆունտը	1 ր. 5 կ.	Կապիկայից բերվող թէլի հետ	Ֆ. 1 ր. 30 կ.
—	1 ր. 10 կ.	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Ֆ. 3 ր.
67—100			

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԿՈՎ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ.
2. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ:
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԲԵՐ
1. Ա. Մ. Ե. Պ. — Գիւցաղունք ըստ
Խորենացւոյ Հայկ. Արամ, Վահագն. պատ-
կերներ պատմական կեանքից: Տիֆլ. 81 թ.
գինն է 30 կ.:
2. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. Կ.—Գրաբաւ բա-
յրի խոնարհումը մի աղիւսակի մէջ.
Գործնական և գիտակցական ուսումնասի-
րութեան համար. գինն է 25 կ.:
3. Երգն կ ե ա ն ց Ե. Բ. ՔՇԵՂ. — Խմբա-
կան ձայնագրեալ աղջկայի երգեր (սակա-
ւաթիւ) 50 կ.:
4. Մ օ Ր ի Ս Բ Լ օ ք — փոքրիկ ձեռնարկ
գործնական անտեսութեան. Թարգմանեց
գանազան փոփոխութիւններով Ս. Պալասա-
նեանց 50 կ.:
5. Մօլթայի Խորենացւոյ պատմութիւն
Հայոց 80 կ.:
6. Ջոն Սա. Բիկկի—մտաւոր, ֆիզիքա-
կան և բարոյական խնդիրներով 60 կ.:
Մ ա մ ու լ ի տ ա կ ե ն
Հրատարակութեամբ 2. Գրիգորեանցի
1. Երեւելի— Թէոդորոս Ռշտունի
2. — Թորոս Լեւոնի (2-րդ տը-
պագրութիւն)
3. Կամուս-Քաթիկոս—մանկական եր-
գեր և ոտանաւորներ:
12—12

ՄԵ ԵՐԻՏԱՍԱՐԳ ցանկանում է
ունենալ ՊՐԻԿԱՇԾԻԿԻ ՀԱՇՎԱ-
ՊԱՀՈՒԹԵԱՆ պաշտոն և գիտէ տե-
ղական ԼԵՂՈՒՆԵՐ: Հասցէն թողնել
ՄՇԱԿԻ խմբագրատանը: 3—4 (5)
ՄԱՄՈՒԼԻ տակից դուրս եկաւ և
շուտով կը տարածվի «ԵՐԵՎԱՆԻ ՆԱ-
ՀԱՆԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ»
գրքիցը 96 երեսից բաղկացած և տպված
ԵՐԵՎԱՆԻՄ:
Կը ծախվի առաւելապէս ԹԻՖԼԻՍԻ
մէջ «Կենտրոնական գրաւաճառանոցում»: 6—7.

Վանքի Մայր-եկեղեցու աւագ քա-
հանայ Տէր-Յովհաննէս Սարգսեան և
Եղիսարէթ Դատիկեան Ստեփանեան
սրտի ցաւով յայտնելով առաջինը իր
փեսայի, իսկ երկրորդը իր հօր, ժա-
ռանդական պատուաւր քաղաքացի ԴԱ-
ԻԹ ՆԻԿԻՏԻՉԻ ԶԱՐԳԱՐԵԱՆԻ մահ-
վան մասին, որ վախճանվեց Թեմի-
թանեւորա քաղաքում, խնդրում են
ազգականներին և ծանօթներին շնորհ
բերել հանգուցեալի հոգեհանգստին,
շարժած օր, ապրիլի 18-ին, 10 ժամին
առաւօտեան, Վանքի Մայր-եկեղեցին:
1—2